ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
OFFICE OF THE PRIME-MINISTER OF THE REPUBLIC OF ARMENIA
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS

Երկուշաբթի, 11 հունիսի 2018 թ.

Ձեր հարցին ի պատասխան հայտնում եմ, որ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը նախապես ձեռքբերված պայմանավորվածության համաձայն Երևանի «Մարիոթ» հյուրանոցում ապրիլին տեղի ունեցած հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանին է ներկայացրել Անգլիական մասնավոր իրավաբանական ընկերության կողմից տրված մի տեղեկանք, որում հավաստվել է, որ Արմեն Սարգսյանը 2011 թվականի դեկտեմբերին հրաժարվել է Մեծ Բրիտանիայի քաղաքացիությունից և որ նախադեպային իրավունքի ուժով նա այդ պահից համարվում է Մեծ Բրիտանիայի քաղաքացիությունը կորցրած:

Պարոն Փաշինյանի հարցին, թե ինչու՞ է տեղեկանքը վերցված ոչ թե պետական կառույցից, այլ մասնավոր ընկերությունից, պարոն Սարգսյանը պարզաբանել է, որ Մեծ Բրիտանիայում դա ընդունված պրակտիկա է, երբ քաղաքացին իրեն վերաբերող որևէ տեղեկություն ստանալու խնդրով դիմում է ոչ թե ուղղակիորեն պատկան մարմնին, այլ մասնավոր իրավաբանական գրասենյակների ծառայությանը և այդ տեղեկությունը համարվում է նույնքան հավաստի:

Պարոն Փաշինյանն ի գիտություն է ընդունել այս տեղեկատվությունը, այսուհանդերձ կարծում է, որ ճիշտ կլինի, որ տեղեկանքը հրապարակվի, որպեսզի նաև փորձագիտական հանրությունը դրա վերաբերյալ մասնագիտական կարծիք հայտնելու հնարավորություն ունենա:

Վարչապետի մամուլի քարտուղար
Արման Եղոյան

Հեռախոս՝ (374 10) 52-87-12
Phone: (374 10) 52-87-12
Էլ.փոստ՝ press@gov.am